ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

ք. Աշտարակ **29-ը հուլիսի 2026թ.**

ժամը 15[00]

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Մ. Հովհաննիսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Ա. Գրիգորյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Հ. Գևորգյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար**
Վ. Հարությունյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Մ. Դատումյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Ն. Ավանեսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
2. 2026 թվականի երկրորդ եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
3. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
4. Մարզի համայնքների 2026թ. 2-րդ եռամսյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
5. Համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
6. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2026 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
7. Այլ հարցեր:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի նախագահությամբ մեկնարկեց օրակարգային հարցերի քննարկումը:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2026 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի պատվիրակությամբ իրականացվող մարզի 5 մանկապարտեզներում /Աշտարակի թիվ 1 «Մանուշակ», Հարթավանի, Ապարանի թիվ 1, Քուչակի, Աշտարակի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզներ/ այս պահի դրությամբ իրականացվող շենքերի վերանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, «300 դպրոց և 500 մանկապարտեզ ծրագրի» շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացվող Թալին համայնքի «Ներքին Սասնաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման մասին:

Լսեցին դեպի դպրոց տանող ճանապարհների հիմնանորոգման ցանկում ներառված ճանապարհաշինարարական աշխատանքների մասին տեղեկատվություն. Գետափի հիմնական դպրոցի /մ 0.2 կմ, Վերին Սասնաշենի Մ.Մանուկյանի անվ. հիմնական դպրոցի՝ 0.1կմ և մարզային նշանակության Տ-1-41, 1.5կմ ավտոճանապարհ, Նոր-Ամանոսի կրթահամալիրի՝ բնակավայրի կենտրոնից դեպի դպրոց 0.5 կմ համայնքային ճանապարհ, գ. Նոր Եդեսիայի Ն. Շնորհալու անվ. միջնակարգ դպրոցի՝ բնակավայրի կենտրոնից դեպի դպրոց 0.9 կմ համայնքային ճանապարհ, Լուսակնի միջնակարգ դպրոցի՝ բնակավայրի կենտրոնից դեպի դպրոց 0.6 կմ համայնքային ճանապարհ և Սասունիկի միջնակարգ դպրոցի՝ բնակավայրի կենտրոնից դեպի դպրոց 0.9 կմ, ավտոճանապարհների ասֆալտապատման աշխատանքների մասին:

«Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչված հողակտորների օտարման գործընթացը սկսելու և հողամասերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքվել է պայմանագիր: Նշված աշխատանքները ավարտվել են և ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմին է ներկայացվել հողերի գնահատման եզրակացությունը: Այս գործընթացի հետ կապված մարզպետի աշխատակազմի հետագա գործառույթների ճշտման նպատակով աշխատակազմը դիմել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Նշվեց նաև, որ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև մարզպետի աշխատակազմի վարչական շենքի գազամատակարարման գծի կառուցման, ջեռուցման համակարգի անցկացման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքվել է արդեն պայմանագիր:

2026-ին իրականացվելու է մոտ 70կմ ճանապարհների գծանշման և ճանապարհային կահավորանքով համալրման աշխատանքներ: Աշխատանքները ընթացքի մեջ են, իսկ 2026 թվականին ՀՀ Արագածոտնի մարզային ավտոճանապարհների ընթացիկ պահպանության վերաբերյալ քննարկման արդյունքում ***մարզպետի կողմից տրվեց հանձնարարական՝*** մարզային

ճանապարհների սպասարկման աշխատանքները բարելավելու նպատակով կազմակերպել հանդիպում այդ ճանապարհները սպասարկող կազմակերպությունների հետ:

Քննարկվեց նաև որոշ շինարարական աշխատանքների ուշացման պատճառների, այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների և այդ աշխատանքները ժամկետներում ավարտելու հարցեր:

2. 2026 թվականի երկրորդ եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Նշվեց, որ 2022-2026 թվականների հաշվետու ժամանակահատվածում 26 սուբվենցիոն ծրագրերից այս պահի դրությամբ ավարտվել է 3 ծրագիր, ընթացքի մեջ է 23-ը: Կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով նախորդ 3 ամիսների ընթացքում ծրագրերը մշտադիտարկվել են ամսական առնվազն 2 անգամ՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 138 մշտադիտարկում: Նշվեց, որ յուրաքանչյուր այցի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն, նշվում են թերությունները, կցվում կատարված աշխատանքների լուսանկարները:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները կապված են լինում աշխատանքների որակի, ժամկետների, ինչպես նաև նախագծի համապատասխանության հետ: Մշտադիտարկվող ծրագրերի շարքում է նաև Աշտարակ համայնքի Ոսկեհատի մանկապարտեզի վերակառուցումը, որտեղ շինարարությունը ավարտական փուլում է, սակայն գրունտային ջրերի առկայության հետևանքով նույնիսկ աշխատանքների 99 % ավարտվածության պայմաններում չի կարող հանձնվել շահագործման: Առաջարկվել է կատարել մասնագիտական խորը ուսումնասիրություն՝ խնդրին լուծում տալու նպատակով: Այս խնդրի լուծման տարբերակները քննարկվում են ՀՀ ՏԿԵ նախարարության և Աշտարակ համայնքի հետ:

Բոլոր արձանագրված խնդիրները գրավոր կամ բանավոր կերպով իրազեկվում են: Համայնքների կողմից իրականացվում են համապատասխան շտկումներ և ներկայացվում մարզպետի աշխատակազմ:

Տեղեկացվեց նաև, որ 2026 թվականին մարզի 8 համայնքների կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է 25 ծրագիր, որից հաստատվել է 7-ը՝ շուրջ 2566156574 դրամ արժեքով: Մնացած ծրագրերը պետք է վերափոխվեն և ներկայացվեն՝ որպես 2027 թվականի ծրագիր, ինչի վերաբերյալ համայնքները տեղեկացվել են:

3. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրի ցանկում ներառված ՀՀ Արագածոտնի մարզի թվով 52 դպրոցներից այս պահի դրությամբ 9-ում աշխատանքները ավարտվել են, 2-ը՝ Կարբիի և Ալագյազի միջնակարգ դպրոցները, նախագծահաշվարկային փուլում են, 2-ը՝ Թաթուլի և Նորաշենի միջն.դպրոցները, մրցութային փուլում են, 39 դպրոցներում շինաշխատանքներն ընթացքի մեջ են և գտնվում են տարբեր փուլերում: Ակնկալվում է, որ սույն թվականի սեպտեմբերին շահագործման կհանձնվի ևս 7 դպրոց:

Նշվեց, որ շինաշխատանքները ներկայումս իրականացվում են մեծ թափով և ծավալներով՝ պայմանավորված եղանակային բարենպաստ պայմաններով: Մեծածավալ աշխատանքներին զուգահեռ՝ անհրաժեշտություն է առաջացել 11 դպրոց տեղափոխել այլ դպրոցներ՝ երկհերթ ռեժիմով ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով: Տեղափոխվող 11 դպրոցներից 8-ի դեպքում առկա է տրանսպորտային միջոցի տրամադրման անհրաժեշտություն, որի համար օգոստոս ամսվա ընթացքում հայտարարվելու է մրցույթ:

Տեղեկացվեց նաև, որ հիմնանորոգվող և կառուցվող դպրոցները ամբողջությամբ համալրվելու են նոր գույքով, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել գույքի գնահատում՝ դուրս գրել, խոտանել դպրոցում առկա ոչ պիտանի հնամաշ գույքը: Այս նպատակով գույքի խոտանման և դուրսգրման գործընթաց է կազմակերպվում արդեն 18 դպրոցներում:

4. Մարզի համայնքների 2026թ. 2-րդ եռամսյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան /* :

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը ներկայացրեց տեղեկատվություն 2026թ. 2-րդ եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: Հունիսի 30-ի դրությամբ հավաքագրումը մարզում ընդհանուր կազմել է 34,4 %. Աշտարակ՝ 33.8%, Շամիրամ՝ 39,3%, Ապարան՝ 37,0%, Ալագյազ՝ 51,1%, Մեծաձոր՝ 15,7%, Արևուտ՝ 63,0%, Թալին՝ 35,7%, Ծաղկահովիտ՝ 23,1%: Նշվեց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ ցուցանիշները նկատելի ցածր են:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչությանը համայնքների ղեկավարների հետ համատեղ շարունակել պլանավորած ցուցանիշների հավաքագրման գործընթացի վերահսկողությունը:

5. Համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան /:*

Զեկուցվեց, որ յուրաքանչյուր տարի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի համաձայն մարզպետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նախորդ տարիների չօգտագործված ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ:

Նշվեց, որ 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը կազմել էր 10971104 ՀՀ դրամ: Մարզպետի աշխատակազմի և համայնքների ղեկավարների կատարած աշխատանքների արդյունքում չօգտագործված արձակուրդային 10971104 ՀՀ դրամ հուլիսի 1-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է:

Համայնքների ղեկավարներին ևս մեկ անգամ տեղեկատվություն ներկայացվեց, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ ամենամյա արձակուրդը կամ դրա տեղափոխված մասը սովորաբար տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում: Ամենամյա արձակուրդը կամ դրա տեղափոխված մասը նշված ժամկետում չտրամադրելու դեպքում գործատուն պարտավոր է ժամկետից հետո կետանցած յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարել տուժանք՝ 0,15%-չափով:

Առաջարկվեց համայնքի ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ իրենց աշխատակազմի աշխատակիցներին և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին օրենքով սահմանված ժամկետում ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ:

6. ***Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2026 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն*** /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /:

Տեղեկացվեց, որ **2022 թվականին** հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրից այս պահին ավարտվել է 18 ծրագիր: 19 սուբվենցիոն ծրագրի համար պետական բյուջեից ֆինանսավորման չափը կազմել է՝ 1 853 703 800 դրամ: Ներկայացվեց տեղեկատվություն ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մասին:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքերի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր՝ 7 430 350 338 դրամ արժեքով: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր ՝ 6 045 271 911 ՀՀ դրամ արժեքով: Ներկայացվեց 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին մանրամասն տեղեկատվություն:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել **16** ծրագիր: Հաստատված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 10 097 560 426 դրամ, որի մեջ համայնքի մասնակցության չափը 5 155 183 522 դրամ է, պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 4 894 551 364 դրամ, այլ ներդրողների կողմից ֆինանսավորման չափը՝ 47 825 540 դրամ:

2025 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանն է ներկայացվել 19 սուբվենցիոն ծրագրի փաթեթ: Ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 10 ծրագիր և 2 ծրագիր դրական-պայմանով: Ներկայացվեց 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին մանրամասն տեղեկատվություն: 2025թ.ին սուբվենցիոն ծրագրերի համար ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավման չափը կազմում է 3 389 789 900 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է՝ 2024, 2025 թվականների ծրագրեր:

2026 թվականին մարզի 8 համայնքներում նախատեսվում է իրականացնել 31 սուբվենցիոն ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 23 578 724 533 ՀՀ դրամ: ՀՀ ՏԿԵ նախարարություն է ներկայացվել 25 ծրագիր, որից 7 ծրագիր արդեն ստացել է դրական եզրակացություն: Մնացած բոլոր ծրագրերի մասով՝ համաձայն կառավարության հանձնարարականի, առաջարկվել է համայնքներին այդ ծրագրերը ներկայացնել որպես 2027 թվականի սուբվենցիոն ծրագիր՝ կատարելով համապատասխան փոփոխությունները:

2027 թվականին համայնքներից ստացվել է 8 սուբվենցիոն ծրագրային փաթեթ,որոնք համաձայն ՀՀ կառավարության 2006թ. թիվ 1708 որոշման՝ նախապես քննարկվել և համաձայնեցվել են ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի հետ: Այժմ ընթանում են ծրագրային փաթեթների ուսումնասիրության աշխատանքները, որից հետո ամբողջական փաթեթները կներկայացվեն ՀՀ ՏԿԵ նախարարություն:

Այլ հարցերի շրջանակում քննարվեց Շամիրամի գազաֆիկացման և Արտենիի խմելու ջրի լուծման հարցերը: Մարզպետի կողմից առաջարկ եղավ շրջայց կազմակերպել մարզում վերանորոգվող մանկապարտեզներում, արդյունքները տեղում ուսումնասիրելու, խնդիրները վեր հանելու նպատակով:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ և արդյունավետ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**